

ՏԻՐ ԵՒ ՏՆՈՐԻՆ


Ե. ԹՈՐՕՏՏԻԱՆ

Նամակ կամ որ եւ է

գրութիւն պէտք է ուղղել առ

Տնօրին. ԱՐՇԱՒԱԹՍ լրագրի

ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասին.	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՆԵՐ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHALOUSYCE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆՆԻԿ
ԵՒ ԹՂԹԱՄԱՐԻ ԺԱԽՔԸ
ԽՆՔԱԳՐՈՒՄԵԱՆ ՎՐԱՅ Է:

ԽՆՔԱԳՐՈՒՄԵԱՆ ՈՂՊՈՒՄԸ
ԳՐՈՒՄԻՆԻՍ ԵՍ Զ'ԵՆ ՏՐՈՒՐ

Ա.ՉԴԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ
Կանխիկ վճարելի են

ԽՐԱԿԱՆ ԿԱՆ Ա.ՉԴ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Պատ. բաժն. Եւրոպայի քաղաքացիական պատերազմի ժամանակահատվածում, որտեղ ինքնուրույն կյանքը անհնար էր, մենք մտածեցինք, որ մեր հայրենիքի համար, որտեղ մենք մտածեցինք, որ մեր հայրենիքի համար...

ՍՓԻՆՔՍ ԵՒ ԻԳԻՊՈՍ

«Ա.Մենք որ Առաջնորդարանով ու անոր պաշտօնեաներով զբաղվել կ'ըլլա՞յ մի ես՝ որ մը վերջապէս մենք ալ պիտի ուզեն՝ ձանձրանալ այդ ճամբարութիւնները այդ ևս լսելէ: Արդարեւ ստուգութիւններ են ըստածները, բայց մենք քաջութիւնը պիտի կրնանք ունենալ ճամբարը խոստովանելու, ի՞նչ կրնանք ընել, քանի որ...»

Այսպէս կը խօսին ու կը մտածեն եւ զեր անցեալ գիշեր, կարգ մը անճոռնի տրամաբաններ, ընտանեկան շրջանակի մէջ տրուած յայտնաբերման մը մէջ:

Մենք ալ զայրացած այս նորանաւ ու զգայուն երիտասարդներու խեղճ ու կրակ տրամաբանութեանց դէմ, որոնք երբ գեղուհի մը բարեկէս ինքզինքին ասպետ մը կը կարծեն, և երբ անոր ձեռքը սեղանը արժանանան՝ եօթերորդ երկինքը բարձրացած Ռաւաններ կը համարին ինքզինքին, այս անգամ նիւթ կ'ընտրենք Սփինքսը և Իգիպոսը, պարզապէս զայրացած ըլլալու համար...:

Մեր ընթերցողներէն շատերը, կրնայ ըլլալ որ Սփինքսին հանդիպելու ատեն, կարծեն թէ՛ «Թուրքիա 1876էն ի վեր» գրքոյկին քննադատութիւնը գրող Պարոնն է. և կամ եթէ բուրգերը այցելած են, բուրգերու ստորոտը գտնուած մէկ խոշոր անհեթեթ արձանն է պիտի ըսեն, որ տարօրինակ հնութիւններ կը յիշեցնէ և կամ Եգիպտոսացոց հին ճարտարապետութեան հոյակապ աշխատութիւնները մեր տեսութեան առջև կը պատկերացնէ:

Սփինքս ասոնց ո՛չ մին է և ո՛չ միւր. այլ՝ դիցաբանական առասպելաբանութեանց մէջ իր մասնաւոր գլուխը ունի և հետաքրքրաշարժ պարունակութիւն մը ունենալուն համար՝ հոս մեր ընթերցողաց պիտի ներկայ-

յացնենք, ի հարկին մեզի իբր օրինակ ծառայեցնելու նպատակաւ:

Սփինքս առասպելական հրէշ մ'է, որ Եգիպտոսի և Յունաստանի մէջ կը գտնուէր. Եգիպտոսի Սփինքսը կնոջ գլուխ ունէր և իմաստութեան Աստուածուհոյն Նէյթի խորհրդանշանն էր: Սակայն, ընդհակառակն Նէյթ՝ կնոջ մը կիսարձանին վրայ առիւծի մը գլուխ կը կրէր: Թէքաիտի Եգիպտական տաճարներու աւերակները, դեռ միակտուր Սփինքսէ ուղիներ ունին, որոնք տաճարներուն գաւիթները (propylée) կ'առաջնորդեն:

Յունական դիցաբանութիւնը, Սփինքսը՝ Պէօթիոյ Թէփէի շրջակայքը դրած է. բայց երիտասարդ աղջկան մարմնի և առիւծի գլխուն վրայ, աւելցուցած է արծիւի թիւեր: Սփինքսը՝ —կ'ըսեն Յոյն բանաստեղծները— Իեզրիսի և կամ Տօլիսէն Թէփէ տանող ճամբուն վրայ կը կենար և անցորդներուն հանելուկներ կ'առաջարկէր. անոնք որ չէին կրնար լուծել Սփինքսի առաջարկած հանելուկները, ծովը կը նետուէին: Վերջապէս Իգիպոս եկաւ և լուծեց հանելուկը. այն ատեն Սփինքսը յաղթուած՝ յուսահատութեանէն ալիքներուն մէջ նետուեցաւ և Թէփէ՛ որուն ընակիչները այնչափ տառապած էին այդ հրէշին ձեռքէն, Իգիպոսը իրենց թագաւոր ընտրեցին:

Հիմակ յստակ կերպով հասկցանք թէ՛ Սփինքսը հանելուկներ առաջարկող հրէշ մ'է եղեր, և Իգիպոս մը զայն յաղթած է իր խելքովը և Սփինքսը կատաղի ալիքներու քմահաճոյլին յանձնած. ինչո՞ւ արդի Սփինքսներուն դէմ ալ Իգիպոսներ չ'ելլեն:

Հանելուկներու շարք մը չէ՛ Առաջնորդարանի արդի անց ու դարձերը, որոնց լուծումը գտնելու համար դիցաբանական Իգիպոսներ կենդանանալու պէտք չունին —եթէ դիցաբանութիւն բառը բառական չէ՛ հաստատելու համար թէ՛ նոր Իգիպոսներ հասցնելու համար շարագրուած են անոնք—:

Ի՞նչ կը նշանակէ վերջերս Առաջնորդարանի վրայ բացուած դատ մը՝ Շէյխ-Էթմանի կալուածին համար, որը մտաւորապէս 1000 ոսկույ վնաս մը տալու կ'ըսպառնայ այդ ազգային անունին տակ գրուած ֆոյլիսներուն:

Ի՞նչ կը նշանակէ Քաղաք. Ժողովոյ անդամներուն մէկ մէկու ետեւէ զրկած հրաժարականները, երբ այդ յարգելի անդամներուն շրջանը արդէն լրացած է և քիչ ատենէն ինքնիրեն պիտի լուծուին:

Ի՞նչ կը նշանակէ Քաղաքական Ժողով-

վոյ անդամաց ստորագրութեամբ արձանագրութիւն մը վաւերացնելէ ետք՝ տրուած այդ որոշումը շնչելու և այդպէսով ստորագրող անդամները անպատուելու համար ձեռք առնուած անուղղակի միջոցները...:

Ի՞նչ կը նշանակէ քահանայ մը անպաշտօն ձգելով, ուրիշ անոր նման պանդուխտ քահանայ մը Եգիպտոսի շրջակայքը Մոնուզի աւթիւ տնօրէնէրի զրկելը. միթէ բաւական չէ՞ որ այդ քահանան տարիներէ ի վեր Եգիպտոսի արուարձաններուն մէջ ապրող ազգասէր Հայերուն քրտանց արդար վաստակը չորթէ, իր գիւղին մէջ եկեղեցի մը կառուցանելու խաբեպատիր բանաձեք հնարելով...:

Ի՞նչ կը նշանակէ 15-20 օր առաջ ժողովուրդին կարեւոր անհատներուն մէկէն մկրտութեան վկայական մը տրուելու համար 50՝ զրշ. դանձել, և ժամանակին չը յանձնել պէտք եղած վկայականը — ասիկայ հանգուցեալ Մ. Սարգիս Մելիքեանի զաւկին մկրտութեան վկայականը չէ, որուն Տէր Մամբրէ, գանձելով հանդերձ վկայականի ծախքը՝ չէ ուղած արձանագրել առաջնորդարանի տոմարներուն մէջ և այժմ՝ այդպիսի վկայական մը տալ կը զլացուի:

Ահա Սփինքսի նման դժուարալինճիւ հանելուկներ կ'առաջարկէ մեզ մեր առաջնորդարանը, բայց հարկ չ'կայ Իսպուստիոն նման սպասել որ իթիպոս իր դիցաբանական կարողութիւնը ցոյց տայ մեզ, այս հանելուկներն ալ լուծելու համար, իր Թէփէի արքայական գահէն իջնալ. մենք ենք որ պիտի կրնանք այս Սփինքսանման հանելուկներուն արժանի լուծումը գտնել:

Թէփէի ընակչաց նման չ'սպասենք որ Սփինքսի հանելուկները լուծելու համար Իգիպոս մը աշխարհ դայ...:

ՏՆՈՒՐ ԱՆԱԿԵԿԱԼ ՄԸ

«Նոր կեանք»ի վերջին 23 և 24 միացեալ թիւերուն մէջ կը կարդանք.

«Շատ յատկանշական էջ մը կարելի է գրել շահատակութիւններով բոլոր անոնց, որոնք վերջին տարիներս Հայկական աղետքները շահագործեցին՝ ստորափէն խելայեղ Սուլթանէն կորզելու համար դրամ, շքանշան, աստիճան, արտօնութիւններ եւ այլն: Թողովը Երևոյցի գնդանին մէջ իրենց կալանաւորին մշտնջենական զարհուրանքը քամող վոճմակը, Երուպոյի մէջ հարիւրաւորներ են, խմբագիր, երեսփոխան, պաշտօնակալ, սեղանաւոր ու քախտախնդիրներ, որոնք ամեն միջոցներով դրամ կորզեցին մեր աղէտքներէն և ամէն ջանք ի

գործ գրին խեղդելու համար մեր անձկութեան ու խուճապի աղտոտակներուն արձագանքները :

Շատ ճիշդ է որ Եւրոպայի մէջ զանազան դժբաղդաբար շատեր՝ որոնք խիղճը, ճշմարտութիւնը, արդարութիւնը նախապաշարում մը նկատելու չափ առաջ երթալով երկըրպագեցին իրենց երկնցած ոճրագործ ձեռքին՝ որուն մէջ իրենց շահասիրութեան ու փառասիրութեան ստորին փափաքներուն գոհացում տալու իղձը կար : Սակայն՝ այդ մարդիկը ե՞րբ դասալիք գինւորի մը պէս իրենց կռնակը դարձուցին մեզ, այսինքն արդարութեան, խցելով ականջնին իրենց խղճին — եթէ ունէին — ու այն նախատինքնին գէ՛մ, որ ճշմարտութեան և արդարութեան պաշտպան՝ մարդկութեան ճշմարտ գաւազները կ'ուղղէին անոնց և անոնց պաշտպանեալի հասցէին : Այն պահուն ու անկէ վերջ՝ երբ արդէն աշխարհացունց ոճիրները սեղի ունեցած էին, և ամբողջ աշխարհի լափիչ հայեացքները ինկած էին Վոսիորի արմանց վրայ բարձրացած, դարու ամենամեծ նախատինքն եղող արիւնարբու կատարի ոճրագործ մարդպետի պաշտպանի մը վրայ, որովհետեւ նայուածքներու փոթորիկները իր հանգիստը կը խռովէին, թէ և վարկեանական՝ գոր չէր ուզեր այդ արեան խրատանքի մէկ երկվայրկեանը կորսնցնել տիրութեան թիթեւ ամպով մը, անոնց բնական հետեւանքը եղող ապագայ շանթերու առաջըր առնելու կամ գէթ մեղմացնելու միջոցին վրայ մտածեց, ու շուտ գտաւ . քանի որ հողը արդէն պատրաստ էր : Եւ ուր որ իրեն աչքը ինկաւ ո՛րեւէ մէկը, որ փոթորիկի հոսանքին դէմ կրնար պատնէշ մը ըլլալ, կաշառեց զանի և այսպէսով . . . գիտե՛ք հետեւանքը :

Մեր ըսածը հաստատելու համար՝ թէ և փաստերու շարքը շատ երկար է, բայց մէկ հարը մէջ ընկելով՝ կը կարծենք թէ բաւական պիտի ըլլայ սխալ կարծիքները ուղղելու անոնց, որոնք կը կարծեն թէ Սուլթանը տխմար մը, սպառչ մ'է : Ձգենք գահակալութենէն առաջ մեծ մարդասպանին ըրած ամեն սիրագործութիւնները, որոնց շնորհիւ կարողացաւ մինչեւ գահը բարձրանալ, այն գահը՝ որ իր ճիւղաղի հոճոյքներուն շատ բաներ կը խօստանար . ինչպէս տեսնուք :

Երբ 1894 թուականներուն երկար ժամանակի պատրաստութիւններով իր գոյութեան հիմնաքար եղող ծրագրին գործադրութեան կ'սկսէր Սասունէն, Եւրոպական տէրութիւնները կարգ մը բողոքներէ վերջ, երբ տեսան թէ ունէ արդիւնք չիկայ և չէ կարելի յուսալ, համաձայնութեան մը գալով՝ մշակեցին բարենորոգումի ծրագիր մը՝ ու ներկայացուցին Սուլթանին, որպէսզի ստորագրէ . իսկ սա՛ տեսնե՛ք :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՉԵԱՆՑ ԹԱԳՈՒՀԻՆ

Վարագոյրը իջաւ խուռն ծափահարութիւններով :

Թեաք Մոսկովի դիւթական թատերախաղին երկրորդ արարը աւարտած էր, երբ Սիւլվիա ար Նաիվս նշանաւոր դերասանուհին, ընդհանուր Փարիզու չփացած աղան, երեք անգամ ողջունեց մոլեռքանչ բազմութիւնը :

Չափազանց գեղեցիկ էր նա, և իր «Սըրբալի լերանց մէջ ձեանց թագուհուհոյն» հրաշալի դերը հիանալի կերպով կատարեց :

Իր զգեստներուն սարազը բուն հրաշալիք մ'էր՝ որուն առ նուագն 1500 ոսկւոյ ոչինչ գուժարը ծախք եղած էր, թերթիւն ըսածին նախելով . նաև կ'ապանովցնէին թէ՛ գեղեցիկ Սիւլվիա կը կրէր ա'յնպիսի ազամաններ, որ կարծես իրեն համար արքայական պսակէ՛ մը քաղուած էին : Ենէ չընդ էր իր փառաւոր արդուզարդին մէջ . իր շողուն աչքերը, չիկապոյն հեքաց պարուրուածները և ճկուն հասակը որ «Չեանց թագուհուհոյն» սպիտակ շրջազգեստին մէջ կը փայլէին, հիացում կը պատճառէին զինք գիտողներուն :

Այո՛, թագուհի՛, արդարև թագուհի մ'էր

լով և գիտնալով թէ Եւրոպան գիտէ երբեմն իր կամքը յարգել, սկսաւ կարգ մը գիտողութիւններով ձգձգել ժամանակ չահելով այդ համաձայնութիւնը քանդելու . նա շատ լաւ համոզուած էր թէ ատոնցմէ գոնէ մէկը, իր միտքը հասկնալով պիտի ժպտէր իրեն : Եւ արդարեւ իր սպասած մէկը չ'ուշացաւ . և այդ ժպտիւն արդիւնքն է որ կը վայելէ այսօր գահազան տրտօնութիւններ ձեռք տնցնելով, այն՝ որ Սուլթանին բնական թշնամին էր . ու մենք այսօր որչափ կարմիր Սուլթանը, նոյնչափ ալ գահն ասելու իրաւունքը ունինք : Եւ այդ մէկը շատ որոշ է . . . :

Յիմարի մը, ապուշի մը, կալանաւորի մը գործ չէ կուրծք տալ քառորդ դարէ ի վեր, ա'յն հարուածներուն, որոնք սահմանուած էին մահացնել թուրք կառավարութիւնը, վերջնականորէն :

Այսպիսի բաւ համարելով քայլ մը ետ դառնալով, «Նոր կեանքի» թիւը կարգաւորու, որ մեր ըսածը կը հաստատէ :

«Սասունեան կայսրութիւնը բացատրութեամբ միայն և միայն Սուլթանի Համիտը կը հասկցուի այսօր : Թուրքոյ միապետը ո՛չ Անդլիոյ թագուհիին պէս նախարարութեան մը ուրջումներուն լոկ վերահսկողն է, ո՛չ ալ Ռուսիոյ Ձարին նման ճնշուած կը մնայ անպաշտօն բարձրագոյն մարմինի մը ազդեցութեան ներքեւ : Սուլթանը բացարձակապէս իր կամքով կը կառավարէ : »

Սուլթանի Համիտի կառավարելու եղանակը երբ աչքերնուս առջեւ պատկերացնելով խորհինք, դիւրաւ կ'ըմբռնենք թէ՛ Թուրքոյ միապետն իշխանին գլխուն մէջ տարտղնած ուղեղ մը զետեղուած չէ : Դէմերնիս ունինք զբաղան, ինքնալստան միտք մը, որ մէթոտով կը գործէ : Դէպքերու տպաւորութեան ներքեւ հապճեպով որոշում չի տար : Մանրակշիռ հետեւանքներու սահմանաւ ամեն գործի հետ երկար ժամանակի պատրաստութեան կը ձեռնարկէ . . .

Երբ 1876 Օգոստոս 12/24ին Համիտ էֆ. Սուլթանի հռչակուեցաւ, կայսրութեան ամբողջ իշխանութիւնը իր սփին մէջ առնելու որոշումը տուաւ : Նոր Սուլթանը գահը ելած պահուն, զրեթէ անուանական միապետ մ'էր, կայսրութեան գերագոյն իշխանութիւնը Պապը-Ալին կը կեդրոնանար : Սուլթանի Համիտ զգաց թէ՛ պարզապէս խնամակալներու հսկողութեան ներքեւ կը գտնուէր : Երկրին իրական տէրւոր Միտհատ Փաշա և պաշտօնակիցները կը համարուէին : Այդ երեսնամեկն անփորձ երիտասարդը այդ բոլորը, Միտհատ, Բիւլտի, Հիւսէյին Ավնի, Բէտիֆ, Քայսէրի Անձեւ կոչուած հինաւուրց նախարարները կոտորեց, փչրեց «որ-

պէս զանթ բրտի», վերջուց նետեց զինքը կաշկանդող Սահմանադրութիւնը, և Սուլթաններու բացարձակ տիրապետութեան իրաւունքը վերահաստատեց . . . :

Սուլթանը անգամ մը իր կառավարութեան բացարձակ իշխանութիւնը ստանձնելէ վերջ, երկրին վարչական բարձր պաշտօնակալները երկու մասի բաժնելով, մէկը Պապը-Ալին զետեղեց, միւսը՝ Երլարը : Դուռը նստող նախարարներուն իշխանութիւնը երկուգէն հաղորդուած հրամաններուն գործադրութեանը մէջ կը սահմանափակուէր . . . :

Այսպէս ահա Սուլթանի Համիտ երկրորդին մէջ հաստատած է վարչական կազմակերպութիւն մը, որ իրեն հնարաւոր կ'ընծայէ պետութեան բոլոր գործերը ամէն բոպէ աչքերուն առջեւ ունենալով, ամենուն հսկել, ամենուն հասնիլ միակ հրամանատարութեամբ :

Սուլթանին քանակի նշանակալ իշխանութեան պատմութիւնը կը հաստատէ թէ՛ Թուրքիան կառավարող միապետը խելացնող յիմար մը չէ, այլ կը գործէ որոշ ուղղութեամբ : Երբ ասեւ զիտէ . . . :

Կարմիր գազանին հոգեբանութիւնը՝ ձեռնհասօրէն ուսումնասիրողի մը կարծիքը :

«Սուտ է թէ Համիտ կոյր գործիք է զինք շրջապատողներուն ձեռքը, ամեն բան իր խորհրդով կ'ըլլայ և ուրիշները իրեն գործիք են (») :

«Կ'ընդունի միայն այն մարդոց խորհուրդները, որոնք իրեն պէս կը մտածեն : »

Եւ ասոնք այնչափ անհերքելի իրականութիւններ են, որ չափ ճշմարիտ է կարմիր Գազանին գոյութիւն ունենալը :

Ասոնց վրայ բաւ մը աւելորդ է : Սակայն աւելորդ չէ երկու բառ մը աւելորդ ընել «Նոր կեանք»ի պատուարժան վարչութեան :

«Նոր կեանք»ը որ յեղափոխական կուսակցութեան մը օսկանն է, և թէ ոչ սղգը, գոնէ կուսակցութիւն մը, քաղաքական որոշ ուղղութեամբ մը առաջնորդելու կոչումը և պաշտօնը ունի . և սակայն շատ ասուր պաղափար մը կուտայ մեզ իր հասկացողութեան մասին, երբ ամենապարզ խնդրոյ մը առթիւ, զինքը հակասութեան մէջ կը տեսնենք :

Իրեն ուղղութիւն տալու ո՛չ յաւակնութիւնը ունինք, և ոչ ալ պաշտօնը . սակայն ազգային գերագոյն շահերու խորին գիտակցութեամբ, ուղղութիւն պահանջելու իրաւունքը ունինք :

(... էվի)

(*) Տե՛ս «Դրօշակ» թիւ 9 «Թուրքոյ շուրջը» յօդուածի վերջին մասը :

նա, և իր ոչ մէկ դերը այնչափ հիանալի խաղացած էր, որչափ այս անպատուանը :

Երբ առաջին ներկայացման երկրորդին, իր չընդ զարդին մէջ երեւցաւ, միայն հիացման աղմուկ մը կար ամեն բերաններու մէջ :

Արդի-թատրոնի ժողովուրդը, հեշտակցութեամբ կը տօնէր այս շինու պատմութեան երեւումը, և հազարաւոր երեւակայական երազներ կը սրանային դէպի գեղեցիկ դերասանուհին :

Այն իրիկունը իր յաջողումէն խոնջած, Սիւլվիա ար Նաիվս իր բնակարանը դարձաւ, առանց նոյն իսկ ուշադրութիւն ընելու, զինքը պաշտող այն խուռն բազմութեան, որ իր շուրջը կը դառնար :

Նախաստարանը երեւցած ատեն, անոր չընդ փունջեր նետած էին, և թատրոնին ծիղունկապանը Մոսկու գէղ մը լլար բերած էր անոր : Բայց գերասանուհին ինքզինքը ջգուտ և յոգնած կ'զգար . . . :

Իր դերասանուհու այլազան կեանքին մէջ՝ նէ շուտ մը նշանաւոր եղած էր :

Ան այժմ ստոյգ էր որ իշխանին կառուրթ թատրոն կուգար . իշխան մը՝ հարստաւ ազնուական, որ մինչեւ իսկ աւելրակ կ'ըլլար անոր համար . բայց սակայն մօտալուտ բաժանման մը վրայ կը խօսուէր, և գուցէ անոր հա-

մար էր որ Սիւլվիա մեծ մտահոգութեան մէջ թաղուած էր . . . :

— Մէկուն մի՛ թողուր որ սենեակս գայ, ըսաւ Մոսկու . այս երեկոյ դերագրքիս վիճակ մը ունիմ :

Եւ Պ. Տնօրէնը, իր թարգմանուհուոյն յուղումը հանդարտեցնելու համար միջնորդեց . և անձամբ կրկնեց միւսնոյն յայտարարութիւնը, յարելով թէ՛ հրահանգը տնտեսաբար չի էր :

Դերասանուհին իրեն համար կիսաժամ մը ունէր . որովհետեւ երրորդ արարուածէն առաջ թատերաբեմին վրայ չէր երևար :

Իր բնակարանին մէջ փակուած, հայելիին մէջ դիտեց անգամ մը իր գէ՛մքը . գիրք մը առաւ և սրտնեղութիւն մը զգալով՝ մէկ կողմ նետեց զայն և ապա հովահարը առնելով՝ քսաւ շարժել և խորհիլ :

Իրչափ ճամբայ քալած էր նա երկու տարուան միջոցի մը մէջ, դերասանուհու կեանքը ընտրելէն ի վեր . որչափ բնական յաղթանակներ տարած էր — որովհետեւ տաղանդաւոր էր և միանգամայն գեղեցիկ — որչափ ակնախաղ եղած էր թագուհու մը պէս իր տանթիւներու և ազամաններու զարդարանքին մէջ :

Այն իրիկունը իսկ, ներկայացումէն վերջ «Սիւլվիա լերանց» հեղինակը ի պատիւ իրեն չընդ երկրորդ մը պիտի տար, որչափ հրճուանք այս ամենուն մէջ և մասնաւոր որչափ տըրբութիւն . . . :

(Շարունակելի) Թարգմ. ՕՆՆԻԿ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ. — Կիմանանք թէ՛ Ե. գիտական կառավարութիւնը որոշած է Ազգ. քսանդրոյ մէջ հրատարակել մը վրայ հանդուցեալ նուպար փաշայի արձանը կանգնել :

— Գերապ. Յովսէփ Եպիսկոպոս Այվազեան հինգշաբթի օրը Ազգ. քսանդրի մեկնած է, Անգլիոյ Վեհափառ Թագուհւոյն հոգեհանգստեան պատարագին ներկայ գտնուելու համար :

Արդէն ասկէ առաջ ծանուցուած էր թէ՛ Ազգ. քսանդրացիք մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնեն հոգեհանգստի պաշտօնը շատ շքեղ ընծայելու համար :

— Գաւառ. Վարչութեան Պատ. Բաղաքական Ժողովոյ անդամներէն Տիար Գ. Է. Սէլվաճեան, որուն բարեյաջող ընտրութիւնը հաշիւ երեք չորս ամիս կայ որ ծանուցած էինք, կը լսենք թէ՛ իր գրադումները պատճառաբանելով հրատարականք մատուցած է Բաղաք. Ժողովոյ անդամակցութենէն :

Տիար Գ. Է. Սէլվաճեանի հրատարականքին պատճառաբանութիւնը տրամաբանական չենք գտնել, որովհետեւ եթէ իր զբաղումները չէին ներքը, բնական է թէ՛ սկիզբէն չէր բարեհաճեր ընդունիլ իրեն առաջարկուած ձրի պաշտօնը :

Անշուշտ ժամանակը պիտի գայ լուծել, մեզի անհասկնալի երեցած այս խնդրը :

— Կը լսենք նոյնպէս թէ՛ Պատ. Բաղաք. Ժողովոյ Գանձապետ Տիար Մովսէս Անանեանց ևս իր հրատարականքը պիտի մատուցանէ և բնականաբար իր իրաւացի պատճառներն ունի :

— Պ. Անաթօլ-Փրանսի ըլլալիք համակրական արտայայտութեան մասին արդէն գրած էինք թէ՛ Նախաձեռնարկ Մասնախումբ մը կազմուած է :

Պատ. Մասնախումբը մեծ եռանդեամբ իր պատրաստութիւնները կը տեսնէ պատշաճաւոր ընդունելութիւն մը կատարելու համար :

Նախաձեռնարկ մասնախումբը կը հրաւիրէ իրենց ձեռնարկին համակրող Պատ. ազգայինները, որ բարեհաճին վաղիւ Կիրակի, կէս օրէ ետք ժամը 3-4, համախումբուիլ « Պատ. տը լ'Ա. ֆրիք » ի մէջ, ինչ ինչ կարևոր խնդրոց կարգադրութեան մասին խորհրդակցութիւն մը կատարելու համար :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լահէյ 7 փետրուար. — Վելհէլմին թագուհին ամուսնութիւնը այսօր կատարուեցաւ Ժողովրդային ամենամեծ խանդավառութեան մը մէջ :

Հուով 7 փետրուար. — Նախարարութիւնը հրատարած է :

Պաթուկ 7 փետրուար. — Պաքուի հրդեհին զոհ գացողներուն թիւը 500 ի կը հասնի :

Կ. Պոլիս 7 փետրուար. — Տէմիրհիսարի և Տէմիրթօքաի (Սէլանիկ) մէջ կառախումբը գծէն դուրս ելած է. 50 զոհ կայ :

Լոնտոն 4 Փետրուար. — Կը հաւաստեն թէ Եօրկիոս իշխանը Կրետական խնդր-

րին վրայ տեսակցութիւն մը ունեցեր է Հորտ Սալիզպուրիի հետ :

ՆՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՈՒԹԱՆ. — 16 էջերէ բաղկացեալ Հանդէս մ'է, որուն առաջին թիւը ստացանք : ԳՈՒԹԱՆ կը խոստանայ Հայ և Փրանսայի աշխատակիցներու օժանդակութեամբ Ժողովրդականացնել գիտութիւնները, հորդորութիւնը և արուեստները : Նպատակ ունի համախմբել մասնագիտական ուժերը՝ որոնք մեծաւ մասամբ գրական անգործութեան մատնուած են, և միեւնոյն ժամանակ մշակել մասնագիտական լեզուները :

ԳՈՒԹԱՆ ի առաջին թուոյն յօդուածներուն տակ գտնուած անունները կը յուսադրեն թէ՛ ԳՈՒԹԱՆ իր նպատակին մէջ պիտի յաջողի և օգտակար Հանդէս մը պիտի ըլլայ յարատուութեամբ :

Տարեկան բաժանորդագրին է .
Թուրքիոյ համար 10 ֆրանկ .
Ռուսիոյ » 6 րուբլի .
Արտաս » 12 ֆրանկ .
Յօդուած, նամակ և բաժնեգրին պէտք է զրկել Գութանի Խմբագրութեան հետեւեալ հասցէով .

M. K. Mézadourian
Ingénieur-Agronome
23 Rue de la Collégiale
Paris

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

Կ. Պօլսէն 31 Յունուար թուականաւ կը գրեն. — Բարձագոյն դուռը Ռուսիոյ դեսպանատան ծանուցած է Սուլթանին հրովարտակը, որով կը հրամայէ Էրզրումի մէջ արտակարգ ատեստի մը հաստատուիլը, Ռուսիոյ բողոքած պատահարները դատու համար : Ռուսերը կը գանդատին թէ՛ Բիւրտերը 3 սպայ սպաննած և երկու կարավանի վրայ յարձակած են :

— Սելանիկէն 6 Փետր. թուականաւ կը հեռագրեն թէ՛ Պուլկար աւազակներ Փլօրինայի մօտ Յոյներու և Թուրքերու վրայ յարձակած են : Չարագործները զսպելու համար զինուորներ զրկուած են ետևնուն :

Կ. Պօլսէն 6 փետրուար թուականաւ կը տեղեկանանք .

ԵՏՄԵՆԷՆ եկած վերջին լուրերը կ'ըսեն թէ՛ կացութիւնը կրկին խռովալից է. բանակին և ապստամբաց մէջ եղած կռիւներէն յետոյ, շատ մը ձերբակալութիւններ կը կատարուին, որոնք Ժողովրդեան կատաղութիւնը աւելի գրգռած են :

Պաթուկէն 6 փետրուար թուականաւ կը հեռագրեն .

Քարիւղի ահագին մթերանոցներ և աւազաններ կրակ առած են Պաքուի մէջ : Կիզիչ հեղուկի հեղեղ մը շատ բնակարաններ ողողած է, բազմաթիւ մարդիկ մեռած են :

Փետրուար 6 թուով Լոնտոնէն ստացուած լուրերը կը հաստատեն թէ՛ կառավարութիւնը որոշած է Լորտ Բիչնէրի 30, 000 հեծեալ հետեակազօրք զրկել :

Տէլափօսի երկաթուղոյ գիծը Բօրթուկալեան հողին ՅՅրդ. քիլօմէթրին վրայ կտրուած է :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Համբոյր մը ինքնին չափ քիչ բան մ'է, ըսուած է, մանաւանդ ընկերաբար առանց գէշ մտքի առնուած համբոյր մը :

Եւ սակայն համբոյր մը երիտասարդի մը մահուան պատճառ եղած է : Ամերիկայէն կուգայ այս պատմութիւնը : Աչք կապուկ խաղացած միջոցին Պ. Փրանք Սլօն ինդալով թաղիկնակով աչքերը կապուած աղջիկը Օր. Էլլա Պուն համբուրած է. աղջիկը կատաղած, գլխարկի գնդասեղով մը յանդուգն պարոնին կը զարնէ :

Գնդասեղը ծունկին վրան մսին մէջ կը խրի. հակառակ բժիշկներու բոլոր խուզարկութիւններուն, գնդասեղին կտորները գտնել անկարելի ըլլալով, շուտով արեան թունաւորում մը յառաջ կուգայ և դրժբաղք Սլօն հիւանդանոցին մէջ կը մեռնի :

Պարզապէս անհամբոյր Միսէ մը համբոյր մը կորզելուն համար . . .

ՏՕՔԹ ՔՕՐՆՖԷԼՏ

Վ. ԿԱՅԵԱԼ ՎԻԷՆՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Նախկին Ներքին Բժիշկ Վիէննայի գլխաւոր հիւանդանոցներուն : Մասնագէտ միզանցքային հիւանդութեանց, Գաղղիական ակտի, կոկորդի, քիթի և բերնի հիւանդութեանց :

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ առաջ ժամը 10 և 12, իսկ կէս օրէ վերջը ժամը 3 և 5, իր տունը Եէրիֆ փաշա փողոց, ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ :

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԴ

Ղեկավարելի Օրապարտիկ. — Ընդձովեայ նաւով դէպի Հիւսիս. Բելտո. — Նորէն դէպի Հիւսիս. Բելտո.

Կոմս Ծաբբլէնի վերջին անյաջողութիւնը չյուսահատեցներ աշխարհիս հնարիչները. այսօր Ռուսական մամուլը կ'իմացնէ թէ՛ շնորհիւ նորահնար գիւտի մը, որ խորապէս գաղտնի կը պահուի, շատ ծանօթ՝ բայց մինչև հիմա ուշագրութենէ վրիպած սկզբունքի մը կիրառումով Տօքթօր Տանիլէվսքի օգապարիկ մը հնարած է, որով իր պատրաստականութիւնը կը յայտնէ, նոյն իսկ փոթորկալից օդի մը դիմագրաւելով փորձեր կատարել : Դժբաղդաբար տեսականէն գործնականը անցնող քայլը դեռ առնուած չէ : Պ. Տանիլէվսքիի օգապարիկը սա առաւելութիւնն ալ ունի, որ սուղ չէ : Մօտ օրերս սաստկայող օդային ճամբորդութիւն մը պիտի լինի : Պ. Տանիլէվսքի կանխաւ վար իշխալու կէտը պիտի որոշէ և այնպէս ճամբայ պիտի ելլայ. տեսնենք այս անգամ այդ կնճառ խնդիրը վերջնականապէս պիտի կրնա՞յ լուծուիլ : Օտար թերթերը քիչ մը սկեպտիկ մնալով հանդերձ, յաջողութիւն կը մաղթեն հնարիչին :

Ուրիշ գիտնական մը, Պ. Անչէցմաուրֆէ վերջերս Վիէննայի աշխարհագրական ընկերութեան ցուցադրած է ընդձովեայ նաւով հիւսիսային բեւեռ երթալու յատա-

կազմի մը . Գիտունը կ'ըսէ թէ՛ նաւը 50 մէթր խորութեան մէջէն յառաջ պիտի ընթանայ , և միշտ այդ խորութեան տակ ծովը ազատ պիտի գտնէ : Նաւը ճամբայ ելլալէ առաջ լաւ մը պաշարով և շնչելի օդով պիտի պարենաւորուի , բեւեռային սառերուն տակ 2500 մղոննոց ընդձովեայ ճամբորդութիւն մը ընել կարողանալու համար . նաւը միայն հինգ հոգի պիտի պարունակէ իր մէջը : Մաղթենք որ այս գիտունն ալ Անտրէի նման դժբաղդութեան մը չ'հանդիպի և կամ նանգէնի ու Ապրուցցօի դուքսին նման բեւեռէն դեռ շատ հեռու՝ ճամբան գոց չ'գտնէ :

Ամերիկացի նաւագետ մ'ըն ալ Պ . Պէրնիէ որ 25 տարի շարունակ ճամբորդած է Լապրատորի եզերքները և հիւսիսային բեւեռները , կը պատրաստուի հիւսիսային բեւեռ երթալու : Նաւագետը Պէրնիէի նեղուցէն պիտի անցնի և Սիպերիոյ եզերքները քերելով ուղղակի սառուցեալ սիկիւննոս պիտի մտնայ , երկայնութեան 165 և 170 աստիճաններուն մէջ : Այդպէսով՝ մինչեւ իր նաւուն սառնակոյտերուն մէջ խորուիլը , դէպի հիւսիս պիտի յառաջանայ և պիտի ձգէ որ իր նաւը սառնակոյտերը դէպի բեւեռ քշող դանդաղ հոսանքին հետ երթայ : Պ . Պէրնիէ կը կարծէ թէ՛ իր ճամբորդութիւնը 3-4 տարի մը պիտի քշէ և ըստ այնմ պիտի պարենաւորուի : Բոլոր ճամբորդութեան ընթացքին մէջ գիտական կարևոր գննութիւններ և գիտողութիւններ պիտի հաւաքէ և ասոր համար ալ հարկաւ ամենակարևոր գիտական նոր գործիքներ պիտի ունենայ , և ի միջի այլոց գլխաւորաբար Մարքոնիի ելեքտրութիւնները (dynamo) որովհետև ամերիկացի խուզարկուն գիտաւորութիւն ունի օգուտ քաղել Մարքոնիի անթել հեռագրէն : Պ . Պէրնիէի նաւը ճիշտ նանգէնի « ֆրամ » նաւուն ձևը պիտի ունենայ բայց աւելի կատարելագործեալ , ինքը համոզուած է թէ՛ միւս խուզարկութիւնները վիժած են և կամ ազետաբեր եղած են , միայն խուզարկուններուն գործածած նաւերուն գէշ շինութեան և անհաստատութեան համար : Նոր խուզարկուն կը պնդէ թէ՛ եթէ Պ . նանգէն երկրորդ փորձ մը կատարէր դէպի Հիւս . բեւեռ երթալու՝ անպատճառ իր նպատակակէտին կը հասնէր :

Ինչ նոր իրագործութիւններով լի արկածալից պատահարներ կ'սպասեն Պ . Պէրնիէի , ատիկայ այժմէն չենք կրնար գուշակել , միայն այնպիսի ըստ բաղդի բանի մը վրայ կը յենու Յանքին , որ չենք յուսար թէ յաջող արդիւնքի մը հանդիպի . գիտութիւնը դեռ քանի՛ քանի՛ զոհեր պիտի ունենայ . . . :

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ
ՈՒՐԱԹ 8 ՓԵՏՐՈՒԱՐ 1901

3224	7446	7311	9545	3149	121
689	1016	2171	2380	3939	4324
5219	5481	5613	5878	6116	6163
6177	6339	7024	8118	8487	8592
	8733	8904	9978		

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ


Ս Ի Ն Կ Է Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալատի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն , Պրիսթլ Սթրիթ ճիշտ գիտաց , Գաֆէ Տը Լա Պուրսի կից .
Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԳԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՁ 6500 ՄԱՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ
Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ներն են և . ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է :
400 է աւելի վիսլայիսկներով և մեայլներով վարձարուած , Երաշխատուեալ մեքենաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսիւն մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄՈՅ ԿԱՅՆԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՅ ԿԱՅՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳՍԻՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե . Բ . ԱՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ , ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐ ի յաւկանչիւն :
ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

Չրի դասեր և նորոգութիւններ , ՍԻՆԿԷՐ մեքենայ յից համար , յաճախորդաց տուններուն մէջ :
Վճարմանց Դիւրութիւն
Փոխանակութիւն հին մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ՄԱՆԿԱՍՐՉ ՏԻՒՆ ՍՈՓԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ
Շարա-Ապսիւղ-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրունֆիլէն փոխադրած է Շարա Ապսիւղ Ազիզ , Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց , Ան՝էտ պէյ Ապսիւղ Բազըրի 20 թիւ սեփականութեան մէջ :
Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ և յաջողակութեամբ արդէն ծանօթ ըլլալով դահիբէրնակ ազգայնոց եւ նոյն իսկ օտարոց , աւելորդ կը համարուի զայն յանձնարուել իւր խնամոցը պէտք ունեցողներուն :
Վկայեալ աղքատներուն համար ձրի գարմանում :

ՄԻՄՆԱՔ ԵՐԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅԻՒՆ

Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատուն մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 Վ՛՛՛՛ ի նիքէլ , կոթէն լարուող սիրուն ծամադրոյններ որոց լաւ բանիլը երաշխաւ գեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժաւացուցիկ 120 ՂՐՇ է սկսեալ մինչև 2500 ՂՐՇ : Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ , նիքէլ , և սքսիտէ ժամացուցիկներ . պատիւ և քօնսլի բազմազան Բանտի լներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք :
Ճօխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Թօ . նօկրաֆներու :

ԺՈՂՈՎՐԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՅԱՌԱՏՈՒՆ
«ԱՐՇԱԼՈՅՍ»
ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻՒԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՉԸ
Օսմանիյէ դեղատանին ղիւնացի փողոցին մէջ .

Ժողովրդական ապարանին մէջ կը պատրաստուին .
Այցեխարտեր , Երաշխատուեալներ , Գիւլիեր , Հրախրապրեր , Մահազղներ , Տեղեկագիրներ , Կանոնագիրներ , Տոմսեր և այլ և այլ ապարանի վերաբերեալ յանձնարարութիւններու կը վաճառուին հեթեթալ գրքերն .
1. ԲՆԱՇԻՍԱՀԻԿ ԲԱՆՍՐԱՆԻ Ա . և Բ . պրակներն , որոնք նոր հասած են և որոյ մասին արդէն խօսուած է « Արշալոյսի » մէջ .
2. ՈՐԲՈՒՆԻ , որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի Թուրքիա մուտքը , ինչպէս կը լսենք , արդիւրած է եղեր .
3. ՀԱՒԱՔԱՏՈՅ հայոց ժողովրդական երգերու , Փարիզ ապարտեալ , Տնօրինութեամբ Տ . Լեոն Եղիազարեանցի :
4. ԶՈՒՍՐՃԱԼԻ Անիքթոսներ և ժողովրդական վէպիկներ կամ Մարդկային կենաց Վարագոյրը և ուրիշ նոր հրատարակութիւններ :

ՏՃԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ
ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒԹԻՍԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :
Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպատակի ենց գումարած 5 ՅՐԻԼԵՍՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլեար աւելի է :
Ս . ԼԵՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիբէ

Աշխարհի մէջ գտնուող արդիւր և է լին կերութենէ աւելի երաշխաւորութիւններ , ընդարձակ գործառնութիւններ և հրօսկուրակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ :
ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործաւ կատար յԱղքատներու :